

ԴՐԱԿԱՆ ՀՈՒՅՉԵՐԸ ՈՐՊԵՍ ԿԱՆԽԱՍՏԱԾՎԱԾ ՆԵՐԻՍԱՍԻ  
ԱՐՏԱՍԻՏՄԱՆ ԵՎ ԸՆԿՈՒՄԱՆ ՄԻՋՈՑԵՐ

<https://doi.org/10.59982/18294359-23.14-dh-11>

**Նարինե Գագիկի Մանուկյան**

բ.գ.թ., դոցենտ

ԵՊՀ, Անգլերենի թիվ 2 ամբիոն

ՀԵՀ, Լեզուների ամբիոն

manukyannarine@ysu.am

**Ամփոփագիր**

Սույն հոդվածում քննության է առնվում երկխոսության ընթացքում խոսակցի (խոսակիցների) դրական հույզերի արտահայտումը, դրանց տեսակները և ազդեցությունը երկխոսության բնույթի, ընթացքի, զարգացման, հանգուցադրման և ավարտի վրա:

Հույզերը մեր խոսքի հիմքում ընկած այն զգացմունքային նրբերանգներն են, որոնք կանխամտածված և ոչ կանխամտածված ներիմաստ են հաղորդում խոսքին՝ տողատակերում ամփոփելով խոսքի իրական նպատակները, խոսողի մտադրություններն ու դիտավորությունները: Վերջիններս կարող են խոսքը դարձնել ինչպես առավել կշռադաստված, այնպես էլ չափազանց անհավասարակշիռ: Հույզերը նաև համարվում են մեր պահվածքի, գործողությունների և վերաբերմունքի անբաժանելի մասը, ինչը տարաբնույթ արտահայտում է գտնում հիմնականում առերես հաղորդակցման ընթացքում:

Կառավարելի հույզերի շնորհիվ հնարավոր է խոսքի տողատակերում թաքցնել կանխամտածված ներիմաստի արտահայտման լեզվական (ենթատեքստ, ակնարկ, զեղչում, երկիմաստություն և այլն) և արտալեզվական (ժեստեր, դիմախաղ, առոգանություն, տոնայնություն և այլն) բազում միջոցներ:

Հիմնվելով անգլալեզու գեղարվեստական գրականության փաստական նյութի վրա՝ աշխատանքում ըստ բնույթի դասակարգվել և օրինակներով ու վերլուծություններով հիմնավորվել են դրական հույզերի որոշ դրսևորումներ՝ երեք հիմնական խմբերում ամփոփելով հույզերի այն տեսակները, որոնք դիտարկվել են սույն աշխատանքում:

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվել նաև ներկայացվող օրինակներում առկա հուզական խոսքում արտահայտված լեզվական միջոցների կիրառմանը:

**Հիմնաբառեր.** կանխամտածված/ոչ կանխամտածված ներիմաստ, լեզվական և արտալեզվական միջոցներ, երկխոսություն, խոսույթ:

**Ներածություն**

Լեզվաբանության և փաստական նյութի մեջ հայտնի ենթատեքստի տեսակների քննությունը թույլ է տալիս նկատել, որ ենթա-

տեքստի միջոցով խոսողը ներակայում է իր հույզերն ու զգացմունքները և դրանցով պայմանավորված զգացողությունները, հոգեվիճակը և վերաբերմունքը անձանց և երևույթ-

ների նկատմամբ: Այսինքն, խոսողի հույզերը նախապայման են հանդիսանում ենթատեքստ պարունակող խոսքի արտաբերման համար:

Հույզերն անձի մտադրությունների և զգացողությունների արտահայտման այն հիմնական բաղադրիչներն են, որոնք որպես ենթատեքստ դրսևորվում են խոսքում [Cmejrkova, 33-34]: Ուսումնասիրելով լեզվաբանության մեջ հիշատակվող ենթատեքստի տեսակները՝ եկել ենք այն եզրահանգման, որ մի կողմից հույզերի որոշ տեսակներ հենց իրենք են խոսքում վերածվում ենթատեքստի, մյուս կողմից ենթատեքստ են դառնում դրանց արդյունքում առաջացած հոգեվիճակը, վերաբերմունքը և զգացողությունները: Հիմնվելով այս հետևության վրա՝ կփորձենք տարբերակել խոսքում կանխամտածված արտահայտվող *դրական* հույզերն ու դրանց արդյունք հանդիսացող և երկխոսության մեջ առավել հաճախ հանդիպող ենթատեքստային դրսևորումները.

**Ուրախություն – հպարտություն,  
պարծանք, գոհունակություն**

**Հպարտություն՝**

A. I'm Hindu, sahib.

B. Really?

A. *But I'm not looking like Hindu.*

B. No.

A. *I'm looking like Sikh gentleman.*

B. Yes.

A. *But I'm Hindu. Although I'm not looking like...* [Dalrymple, 210]

Օրինակում խոսողն անընդհատ հիշատակելով իր ազգությունը՝ մեծ հպարտությամբ խոսում է իր՝ հնդկական ծագմանը ոչ բնորոշ արտաքինի մասին: Նա, քաղաքավարություն ցուցաբերելով, չի բարձրաձայնում այն հատկանիշների մասին, որոնց շնորհիվ ինքը տարբերվում է մյուս հնդկացիներից,

սակայն նրա խոսքի ենթատեքստից՝ հպարտությունից, անգամ նրա ցեղակիցներին չճանաչողը կրնկալի հետևյալ ներիմաստը՝ Hindus are not so handsome and attractive as I am. They are not aristocrats like Sikh gentleman, etc: Բացի այդ, *but* շաղկապի միջոցով խոսողը հակադրում է հնդկացիներին և հնդկական արմատներ ունեցող բարձրատոհմիկներին՝ խոսքին կանխամտածված հաղորդելով պայմանական ներակայությամբ՝ Like Sikh gentleman but Hindu:

**Պարծանք՝**

A. I'm trying to plough through War and Peace.

B. Lots of people read that book out here.

A. *At least they start it. I'm going to be the one that finishes it.* [Michener, 56]

Վերոնշյալ օրինակում խոսողը ներկայացնում է իր կարողությունները և, քաղաքավարությամբ խուսափելով մյուս ընթերցողներին վիրավորելուց, խոսքը պարծանքով արտաբերելով, ներակայում է իր առավելությունը՝ խոսքին հաղորդելով հետևյալ իմաստները՝ It's very difficult to perceive the meaning of this book, others could hardly start it, but I'm already finishing: Նա դիտավորյալ խոսքում առաջացնում է բառաշարային կանխենթադրությամբ՝ *start* և *finish* հականիշ բայերի միջոցով «ընդգծելով *սկսելուց* մինչև *վերջացնել* ընկած ընթացքը»:

**Գոհունակություն՝**

A. I guess you heard about my taking Chuck and Ethel?

B. Me and everybody else in the Forty Mile.

A. What did you think?

B. *That it was just the kind of thing I would expect you would do.*

A. Oh, you would, would you?

B. *That's the way you are.* [Specht, 247]

Օրինակում ներկայացվում է երիտասարդի և օրիորդի խոսակցությունից մի հատված, որտեղ խոսողը՝ տղան, խոսակցին՝ աղջկան, պատմում է իր մարդկային արարքի մասին, թե ինչպես է իր տանն օթևան տվել օգնության

կարիք ունեցող իր ծանոթներին: Տղան համակրում է աղջկան, այդ իսկ պատճառով կարևորում է նրա կարծիքը: Խոսակիցը թեև չէր ցանկանում զգացմունքային առումով հուսադրել տղային, այնուամենայնիվ, քաղաքավարությունից ելնելով, չէր կարող անտարբերություն ցուցաբերել նման արարքի նկատմամբ, ուստի խոսքում չարտահայտելով ոչ մի գովեստի խոսք, հավանության է արժանացնում նրա այդ քայլը, իսկ խոսողի հաջորդող հարցը՝ *Oh, you would, would you?*, վկայում է, որ նա ընկալել է խոսքի ենթատեքստը՝ գոհունակությունը, ինչը կարող է հիմք հանդիսանալ հետևյալ ներակայված իմաստներին հանգելու համար՝ *I know you are a kind and generous person, I didn't suspect you would help your friends, etc.*: Այսպիսով, խոսողը գոհունակություն արտահայտող ենթատեքստի միջոցով «հուշում է» այն մասնավորեցված խոսակցային ներակայությունը, որը կարելի է ընկալել իր խոսքից:

**Սեր/համակրանք – սեր, հիացմունք, խանդ**

**Սեր`**

A. Tell me something first.

B. What do you want to know? ... *it never happened to me before..., not like this, never.*

A. Never?

B. *Never. Almost, but no, never.* Was I good for you?

A. Yes. Yes. *Don't ever leave me.*

B. Let me get up. [Baldwin, 153]

Տվյալ օրինակը երկու սիրահարների երկխոսությունից մի հատված է, որտեղ երկուսն էլ միմյանցից ակնկալում են խոստովանության առաջին քայլը: Խոսողը՝ տղան, խորամանկորեն նպաստող իրավիճակ ստեղծելով՝ գրկախառնություն, համբույր, փորձում է խոսակցին դրդել խոստովանության: Խոսակիցը հասկանում է խոսողի մտադրությունը, սակայն նա նույնպես չի ցանկանում առաջինն

արտաբերել «ցանկալի» բառերը և շրջանցում է բուն ասելիքը՝ *It never happened to me before..., not like this, never* ասույթներում ամփոփելով *I fell in love, I really love you* ներիմաստները: Խոսողն իր հաջորդ խոսքում հարց տալու համար կրկնում է խոսակցի խոսքի այն բառը, որը հնարավորություն կտար երկխոսությունը ցանկալի ընթացքով շարունակելու՝ *Never?:* Այնուհետև խոսակիցն է փորձում իր հարցով խոսողին դրդել խոստովանության և խոսողի՝ *Don't ever leave me* արտահայտությունից ընկալելով *I want to spend my life with you* ներիմաստը, վիրավորվում է ուղղակի *I love you* պատասխանը չստանալուց:

**Հիացմունք`**

A. *You are an actress, you have got to be an actress.*

B. No, I'm not.

A. *But you must be. I've been looking for you for years.*

B. Thank you, Mr. Ellis, but I'm not an actress. [Baldwin, 139]

Տվյալ երկխոսությունը հատված է ռեժիսորի և մի գեղեցկուհու խոսակցությունից, որին ներկա են աղջկա ընկերներն ու ամուսինը: Ռեժիսորն առաջին հայացքից հիացել էր աղջկա գեղեցկությամբ և սիրահարված էր նրան: Ամուսնու ներկայությամբ չկարողանալով ուղղակիորեն հայտնել իր հիացմունքը՝ նա փորձում է զգուշավորությամբ մասնագիտական տեսանկյունից ներկայացնել իր համակրանքը: *Actress* բառի արտահայտած կանխավարկածի միջոցով ռեժիսորը ենթադրաբար ներակայում է *You are very beautiful and charming* իմաստը: Հաշվի առնելով նրա զգացմունքները աղջկա նկատմամբ՝ կարելի է եզրակացնել, որ *But you must be, I've been looking for you for years* խոսակցային մասնավորեցված ներակայությունով խոսողն աղջկան անուղղակիորեն հայտնում է իր զգացմունքների, մտադրությունների և բուն առաջարկի

մասին՝ *You are the one I've dreamed about, I would like you to be with me:*

**Խաղն`**

**A. Last night you said you'd want supper and then you weren't here to eat it. Three separate mornings these past two weeks I go to call you for breakfast and I find you haven't slept in your bed. Don't you think I worry?**

B. I said I was sorry. Time creeps up on me... I don't intend to go out at all... then I think 'maybe for a little while'.

A. I'm not asking about your private life.

B. I thought in a sense you were. [Tyler, 193-194]

Երկխոսությունում պատկերված է երկու ընկերների խոսակցություն, որոնք աշխատանքի բերումով ապրում են նույն տանը: Օրիորդը սիրահարված է երիտասարդին, թեև թաքցնում է: Պատճառաբանելով ընթրիքին բացակայելը՝ նա փորձում է խորամանկությամբ ճշտել, արդյոք որևէ կին է նրա տուն չգալու պատճառը, սակայն խոսակիցը վաղուց էր նկատել նրա զգացմունքները և կռահում էր խոսքի հնարավոր ներիմաստը՝ *Is there anyone in your life?:* Համոզվելու համար տղան սկսում է խոսել իր անձնական կյանքից, ինչն էլ թույլ է տալիս աղջկան հասկանալ, որ ինքն իրեն «մատնել է»: Հարկ է նկատել, որ օրինակում ենթատեքստի ընկալմանը նպաստում են խոսակիցների հարաբերությունները: Այս դեպքում խոսողը ոչ թե լեզվական միավորների և ձևերի կանխամտածված կիրառմամբ է ներակայում իրական իմաստը, այլ պարզապես սրտացավ ընկեր ձևանալով՝ փորձում է խոսակցին «դրդել խոստովանության»:

**Չարմանք – զարմանք, կասկած**

**Չարմանք`**

**A. Is this a ...what you would call, dinner ring?**

B. It's an engagement ring, Macon.

**A. Engagement?**

B. I want to marry her.

**A. You want to marry Rose?**

B. What's so odd about that? If she'll agree to it, that is.

A. *What, you haven't asked her yet?* [Tyler, 196]

Տվյալ երկխոսությունը տեղի է ունենում երկու ընկերների միջև, որտեղ նրանցից մեկը մյուսին ցույց է տալիս մի մատանի և հայտնում, որ իր ընկերուհուն՝ Ռոուզին, ճաշի է հրավիրել և պատրաստվում է այդ մատանին նրան նվիրել: Խոսողը գիտեր խոսակցի և Ռոուզի հարաբերությունների մասին, սակայն տեղյակ լինելով աղջկա վատ համբավի մասին, դեպքերի նման զարգացում չէր սպասում: Չթաքցնելով իր զարմանքը՝ նա փորձում է այդ կերպ առանց ավելորդ բառերի խոսակցին հիշեցնել աղջկա ով լինելու մասին՝ որպես ներակայման միջոց ընտրելով կրկնությունը: Ինչպես տեսնում ենք, *Engagement? You want to marry Rose?* արտահայտությունները խոսակցի խոսքի լեզվական միավորների և կառույցի կրկնությունն են այնպիսի ենթատեքստով, որի օգնությամբ խոսակիցը համապատասխանաբար կըմբռներ հետևյալ հնարավոր ներակայված իմաստները՝ *Do you really treat Rose seriously? Is Rose the girl who one can marry? How can you marry such a girl?*

**Կասկած`**

A. And you left Ida with Ellis?

B. I left Ida with Eliss's party. What's going on in your mind?

**A. And what did you do when you left Ida?**

B. I came home.

**A. You came straight home?**

B. I got into a taxi and I came straight home.

What are you cross-examining me for? [Baldwin, 309]

Երկխոսությունը տեղի է ունենում երկու ընկերների միջև, որտեղ խոսողին զարմաց-

նում է այն փաստը, որ խոսակիցն իր կնոջը երեկույթի ժամանակ մենակ է թողել: Չարմանքը նրա մոտ կասկած է առաջացնում, ինչն էլ ստիպում է խորամանկությամբ տեղեկատվություն ստանալ: Նա, իր յուրաքանչյուր խոսքում «շեշտելով» զարմանքը, կրկնում է խոսակցի խոսքի այն հատվածները, որոնք իրեն կասկածելի էին թվում և որոնց վերաբերյալ կցանկանար ավելին իմանալ՝ *And what did you do when you left Ida?, You came straight home?:* Խոսակիցը, սակայն, հասկանում է հարցի են-

թատեքստը և հետևաբար նաև ներիմաստը՝ *I am sure you have something to do secretly that's why you left Ida. Maybe you have somewhere to go or someone to see, etc.:*

Այսպիսով, վերոնշյալ օրինակները հիմնավորում են այն դիտարկումը, որ հույզերը նույնպես հիմք են հանդիսանում են ենթատեքստի արտահայտման համար: Դրանցով է պայմանավորված երկխոսության զարգացումը, ընթացքը և ավարտը:

### Գրականության ցանկ

1. Baldwin J. “Another Country”. New York; Dell Publishing Co., 1962.
2. Cmejrkova S. “Emotions in Language and Communication”, in European Science Foundation Journal by Benjamin J. “Emotion in Dialogue Interaction”, 2004, pp.33-34.
3. Darlymple W. “City of Djinn: A year in Delhi”. GB: Flamingo, 1994.
4. Michener J.A. “Tales of the South Pacific”. New York: Pocket Books, 1964.
5. “Oxford Dictionary of English”. Oxford: Oxford University Press, 2010.
6. Specht R. “Tisha”. USA: Bantam Books, 1976.
7. Tyler A. “The Accidental Tourist”. New York: Berkley books, 1978.

## POSITIVE EMOTIONS AS THE MEANS OF EXPRESSING AND COMPREHENDING INTENTIONAL IMPLICITNESS

**Narine Manukyan**

*PhD, Associate Professor*

*YSU, English Chair 2*

*EUA, Chair of Languages*

*manukyannarine@ysu.am*

### Abstract

*In this paper, we study the expression of positive emotions by a speaker (or speakers) in dialogue and their influence on the nature, process, development, conclusion, and termination of speech.*

*Emotions are sensitive nuances underlying the core of speech that convey intentional and unintentional implicitness to the words, expressions, and sentences, concealing the real intentions and goals of the speakers.*

*By virtue of our emotions, our speech can become more balanced as well as extremely disbalanced. Emotions are also considered to be an inseparable part of our behavior, actions, and attitude. By virtue of controllable emotions, various means of concealing linguistic (subtext, allusion, ellipsis, ambiguity, etc.) and extralinguistic (gestures, mimics, face-expression, intonation, diction, etc.) intentional implicitness beyond the lines become possible.*

*In this paper, some manifestations of positive emotions are classified and substantiated with samples depending on the factual material in fiction. All types of emotions that have been studied in current observation are distributed into three main groups.*

*We also refer to the implementation of linguistic means expressed in emotional discourse.*

**Keywords:** intentional/unintentional implicitness, linguistic and extralinguistic means, dialogue, discourse.

*Ներկայացվել է՝ 20.03.2023թ.*

*Ուղարկվել է գրախոսման՝ 20.04.2023թ.*